

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ըստհանուր քաղաքական գրութիւնը՝ Ֆրանսիակի նոր մինիստրութիւնը, Ֆրանսիական կարդինալների լաւարարութիւնը, Միջին-եւրոպական պետութիւնների առևտրական գաշնը, Մաքսակին լճֆորսը Ֆրանսիական Պրոտուական գլոբոցական նոր օրինագիծը

Ներկայ 1892 թւականը սկսեց և շարունակում է եւրոպական միջազգային յարաբերութիւնների տեսակէտից՝ ոչ աւելի մսիթարական կերպով քան անցեալ տարի։ Նոյն հակառակ ոյժերը որ կային անցեալ տարի, մնում են և այժմ, դեռ աւելի էլ խիստ կերպով լարւած, որովհետեւ ոյժերի համախմբումը աւելի էլ որոշ է այժմ, քան անցեալ տարւայ սկզբին։ Ֆրանսիան, որը երկու տասնեակ տարի միայնակ էր մնացել եւրոպական կոնցերտում, անցեալ 1891 թւականին վերջապէս յաջողեց իւր արտաքին քաղաքականութեան համար մի զօրեղ դաշնակից գտնել, միաբաննելով Ռուսիայի հետ։ Այդ մի եղելութիւն է, որի մասին մենք մեր անցեալ տեսութիւնների մէջ խօսել ենք ընդարձակ կերպով և որը եւրոպայի 1891 թւականի արտաքին քաղաքականութեան մէջ ամենախոշոր անցքը պէտք է համարել։ Ֆրանսիայի համար այդ դաշնակցութիւնից բղխում են որոշ պարտաւորութիւններ նաև խաղաղութեան ժամանակ՝ պաշտպանել Ռուսիային Արևելեան և Ասիական խնդիրներում, և փոխադարձաբար՝ օգուել Ռուսիացի պաշտպանութիւնից՝ աւելի մեծ ազդեցութիւն ձեռք բերելու համար Կ.Պոլսում և Եգիպտասում։ Թւել մի առ մի բոլոր պէտքերը նոյն խիզ այս վերջին ամիսների պատմութիւնից այդ ապացուցանելու համար՝ մեզ հեռուն կը տանէր. բաւական է միայն յիշել Շաղուրնի գործը, որը

ցոյց է տալիս, թէ որքան սերտ է բարեկամութիւնը Ռուսիայի հետ, որ իւր մեծահոգութիւնով յացնի Ֆրանսիան դժւարութիւններ է անումնոցն իսկ Բոլգարիայի կառավարութեան<sup>1)</sup>:

Ֆրանսիայի դուրս գալը այն առանձնացած դիրքից, որի մէջ նա գտնուում էր մինչ 1891 թւականը, 1891 թւականի քաղաքական ամենախոշոր եղելութիւններից մէկը պէտք է համարել, Բոլորովին անկասկած է որ այդ պետութեան միջազգային դիրքը այդ վերջին տարում շատ բարձրացաւ, Միջեւրոպական եռապետական դաշնակցութեան անհանդիսա անելու չափ:

Իւր այդ նոր դիրքով Ֆրանսիան պարտական է այն անընդհատ աննման աշխատութեան, որ արեց նա հանրապետութիւնը վերջականապէս հաստատելու, դպրոցական վերանորոգութիւնը գլուխ բերելու, տնտեսական ոչժը բարձրացնելու և զօրքը կատարելութեան հասցնելու համար։ Այդ բոլորը գլուխ բերելու համար հարկաւոր էր մեծ տոկունութեամբ և սիստեմական անեղ կոիւ թէ միապետականների դէմ, թէ կղերականութեան դէմ, թէ ծայրացեղ արմատականների դէմ, թէ նախապաշարմունքների և թէ տգիտութեան դէմ առհասարակ։ Եւ այն կառավարութիւնը, որը այսպէս ասած պակեց այս վերջին 21 տարինների ջանքերը թէ ներքին և թէ

<sup>1)</sup> Շաղուրնը Փրանսիական մի լրադրի թղթակից էր Սոֆիալում. բայց իւր տաճ լուրերում անքան կուսակցական ոգի էր մտցնում Բոլգարիակի կառավարութեան դէմ, որ վերջինս, մի քանի անգամ Փրանսիական ներկալացուցչին ասլարդիւն կերպով նախազգուշացնելուց վետով վրձուց արտաքսել արդ թղթակցին Բոլգարիակից։ Ֆրանսիական կառավարութիւնը իսկոն վիրաւորւեց իւր հապատակի դէմ արած ալդ իր թէ ասլօրինութիւնից և, բաւարարութիւն չը ստանալով Բոլգարիակի կառավարութիւնից, իսկոն կարեց իւր գիպլոմատիական բարարերութիւնները վերջինիս հետո Ալսավիսով դէպքը դառաւ աւելի լուրջ գործ, որի համար Փրանսիական կառավարութեանը հասարակաց կարծիքը մեղադրում էր չափից դուրս մեծ շատապողութեան և դէպքին բալորավին անհապատասխան լուրջ կերպարանք տալու համար Բնական է որ երկու կողմից էլ շտապեցին եղածը ուղղել. Ֆրանսիան ընդունեց որ Բոլգարիան ունի իրաւունք օտարահպատակին լաւոնի հանգամանքներում արտաքսել, բայց արդ պալմանաւորեց մի քանի պալմաններով, որոնց մատուն դեռ վերջնական համաձապնութիւն չի կարացել.

արտաքին քաղաքականութեան նկատմամբ, էր հանրապետութեան նախագահ Կարնօի կառավարութիւնը Ֆրէյսինէ-Կոնստան - Ռիքո-Ռուլիքի մինիստրութեան ժամանակ, որը երկու տարուց աւել տևելուց յատոյ ահա այս փետրւար ամսին իւր հրաժարականը տևց: Այդ մինիստրների, մանաւանդ Ֆրէյսինէի, Կոնստանի և Ռիքոի անունների հետ կապւած են վրանսիական հանրապետութեան ներքին և արտաքին յաջողութիւնները այս վերջին տարիներում: Ֆրէյսինէն, որը զինւորական չէ, իրան ցոյց տեսք լաւագոյն պատերազմական մինիստր, որ երբ և իցէ ունեցել է Ֆրանսիան ներկայ երրորդ հանրապետութեան օրեւով. այնպէս որ նա այժմ համարւում է գրեթէ մի «անհրաժեշտ մարդ», իբր պատերազմական մինիստր: Կոնստանին պարտական է Ֆրանսիան բուլանժափանութիւնը ունակոխ անելու համար. Ռիքոն կարեւոր ծառայութիւն է մատուցել Ռուսաստանի հետ սերտ բարեկամութիւն հաստատելու համար. վերջապէս Ռուսիէն կարեւորագոյն ֆինանսական մինիստրն է որ ցայխ ունեցել է Ֆրանսիան այս վերջին 21 տարում: Բայց այդ ամենի մէջ Ֆրէյսինէն և Կոնստանը զլիաւոր զեկավար ոյժերն էին այս վերջին տարիներում, այնպէս որ զոքա երկուսն էլ արդէն կարեւոր պետական մարդկանց նշանակութիւն են ստացած ոչ միայն Ֆրանսիայում, այլ և օտար երկիրների աշխում:

Որքան ուրեմն անսպասելի էր, երբ վետրւարին յանկարծ մինիստրական կրիզիս եղաւ: Պարզւեց, որ Ֆրէյսինէի և Կոնստանի մէջ անձնական ազդեցութեան խնդիր կար, և որովհետեւ Ֆրէյսինէի մնալը անսպայման անհրաժեշտութիւն է դառել, ուստի կազմեց մի նոր մինիստրութիւն, ուր Ֆրէյսինէն, Ռիքոն, Ռուսիէն պահպանեցին իրանց նախկին պրոտֆէվլները, իսկ Կոնստանը դուրս գցւեց մինիստրական այդ նոր կոմինացիայից: Կոնստանը սակայն այնքան շատ համակրողներ ունի չափաւոր հանրապետականների և մանաւանդ մամուլի մէջ, որ նրան հասցրած վիրաւորանքը գուցէ արժան : Ընստի ոչ միայն Ֆրէյսինէին, այլ և նոյն իսկ հանրապետութեան նախագահ Կարնօին, որի դէմ առաջին անգամ թշնամական ձայններ են սկսում լսել հանրապետական բանակում, քանի որ Կոնստանին դուրս մղելը մինիստրութիւնից հանրապետականների մի մասի համար հասկացւում է որպէս ապերախտութիւն Կոնստանի

մեծ ծառապութիւնների՝ դէմ և նախանձ նորա անձնական զիրքի համար: Այդ թշնամանքը ի հարկէ ուղղած է աւելի Ֆրէյսինէի քան թէ կարնօի դէմ: Կոնստանտին բացարձակ վնասազները եղան նոյն թշւառական բուլանժիստները, որոնց պարագլիսին այնքան սարսափելի կերպով ջարդեց Կոնստանտը:

Այժմեաչ նոր մինիստրութիւնը կազմեած է պատէս՝ Լուքէ՝ նախագահ և ներքին դործերի մինիստր: Ֆրէյսինէ՝ պատերազմական, Ռիբոն՝ արտաքին դործերի, Ռուսիէ՝ ֆինանսների, Կաւենեակ՝ ծովային, Ռոշ՝ առևտուրի, Ռիմկար՝ արդարադասութեան և դաւանանքների մինիստր և այնու Այդ նոյնն էր թէ շարունակութիւն Ֆրէյսինէի մինիստրութեան, առանց Կոնստանտի:

Վերջին ամիսների կարեոր դէսկրերի թւին է պատկանում ֆրանսիական կարգինալների հռչակաւոր յայտարարութիւնը: Բայց այդ դէսկր շատ է նշանաւոր, այնպէս որ մենք այդ դոկումենտը առաջ կը բերենք առանց այլ ևս վերադառնալու մինիստրական կրիզիսի խնդրին:

Ահա այդ դոկումենտը, որը կաթոլիկական կուսակցութեան պատմութեան մէջ անկասկած կարեոր տեղ է բռնելու, և որպէս այդպիսին՝ պատմական դոկումենտի կարեւորութիւն է ստացել: Պէտք է նկատած, որ այդ յայտարարութիւնը տպեց երբ Հռոմի պապը մի նամակով Պարիզի արքեպիսկոպոսին պարւիրել էր հաշտել հանրապետութեան կառավարութեան ձեփ հետ:

Ահա այդ յայտարարութիւնը:

«Ամենից առաջ յայտարարում ենք նորից, համաձայն Սուրբ Ամեռի կարգադրութիւններին և կաթոլիկական աւանդութեան, որ մենք ոչ մի ընդդիմադրութիւն չենք անում այն կառավարչական ձեին, որ Ֆրանսիան իրան տւել է: Մենք կարծում ենք որ երկիրը կարօտ է կառավարութեան աւողականութեան և կրօնական ազատութեան:

Այդ դժւար խոստովանութիւնը անելուց յետոյ կարգինալները վկայում են որ հանրապետութիւնը տասներկու տարուց դէս, այսինքն այն օրից, երբ հանրապետականներն են զեկավարները, մի ծրագիր է մարմնացնում, որը կաթոլիկական հաւատի դէմ է, և որ ոչինչ՝ ոչ անձնաւորութիւններ, ոչ հիմնարկութիւններ և ոչ շահեր չեն խնայած հալածանքից, ստորացումից և կործանումից:

I. Ամենից առաջ նոցա (կաթոլիկների) պարասականութիւնն է՝ քաղաքական երկպառակութիւնները լուեցնել, վճռողաբար իրանց գնելով սահմանադրութեան հողի վերայ, և ամենից առաջ ընդունելով վտանգւած հաւատի պաշտպանութիւնը:

II. Եկեղեցին իւ ուզում իրան զնել կառավարութեան և քաղաքացիների մէջ տեղը՝ քաղաքական իշխանութեան արտօնութիւնները սահմանափակելու համար նորա սոորադրեալների դիմաց բայց և պետութիւնը չը պէտք է եկեղեցու և հաւատացեալների մէջ տեղը կանգնի՝ մի հոգեոր կոչման պաշտօնակատարութիւնը խանգարելու, որը ոչ թէ նրանից, այլ Աստղծուց է բջևում:

III. Կաթոլիկները ամեննեին յաւակնութիւն չունին պետութեան մէջ մի պետութիւն կազմելու. բայց նոքա չեն էլ թոյլ տալիս որ քաղաքական իշխանութիւնը դրաւի եկեղեցին իր իւր վարչական ճիւղերից մէկը:

IV. Կաթոլիկները պէտք է ընդունեն զինորական և զպրոցական օրէնքները որպէս վատու նոքա կարող են հարկադրւած լինել այդ օրէնքները տանելու, բայց ոչ երբէք նոցա ընդունելու: Ուստի նոցա պարտքն է՝ բոլոր օրինաւոր ճանապարհներով այն մաքով դորձելու, որ այդ օրէնքները յետո կոչւեն, կամ առնւազն որ այն ամենը հեռացնեի նոցա միջից, ինչ վիրաւորում է քրիստոնէական խղճմտանքը:

V. Կաթոլիկները պէտք է յարգեն կոնկորդատի<sup>1)</sup> մէջ տւած

1) Կոնկորդատ, ակտանի ֆրանսիական կոնկորդատն է հասկացում, աւտինքն այն «համաձայնութիւնը», այն դաշնը որ կապեց նապոլէոն Առաջնի և պապ Պիոս Եօթներորդի հետ 1801 թ. լուլսի, 15. ին, Դամի օրէնք է, որը սահմանում է ֆրանսիական պետութեան և կաթոլիկական հոգեոր իշխանութեան փոխադարձ լարաբերութիւնները և իշխանութեան սահմանները Ֆրանսիաւում: Կոնկորդատը մինչ ալժմ էլ օրէնքի զօրութիւն ունի, Արմատական կուսակցութիւնը չառ տարիներից իւ վեր այխասառում է կոնկորդատը վերացնել և թոգնել որ կաթոլիկները իրանց սեպհական (և ոչ պատական) միջոցներով կաթոլիկ հոգենորականութիւնը պահպանեն, պահանջնջում է որ Ֆրանսիան չ'ունենաէ Սուլքը Աթոռի համար առանձին գեսպան և աղջն, Արմատականների ապէ պահանջները ամփոփւում են ալս խօսքի մէջ՝ նկեղեցու բաժանումն պետութիւնից— Séparation de l'Eglise et de l'Etat.

խօսքը, ձեռք բերած իրաւունքները, բարոյական խաղաղութեան սպայմանը—որը մի դարուց ի վեր ձեւն է այն ներդաշնակութեան, որը երկու իշխանութեան մէջ պէտք է տիրէ և որը վերջապէս մի խոստովանութիւն է, որ աշխարհական իշխանութիւնը անում է եկեղեցու քաղաքակրթական կոչման համար մարդկացին հասարակութիւնների գրկում:

ՎԻ. Այն օժանդակութիւնների մէջ, որ պետական գանձարանը տալիս է կաթոլիկ եկեղեցականներին և որոնք ապահոված են Կոնկորդասով, նոքա (կաթոլիկները) պէտք է տեսնեն պետական սրբազործւած մի պարտք եկեղեցու դիմաց, այն եկեղեցու, որը պետական գանձարանից տրածից շատ աւելի մեծ եկամուտներ հարիւր տարի տառաջ ազգի կարգադրութիւնների ներքոյ դրեց:

ՎII. Մենք զործ չունինք զբաղւելու Կոնկորդասով քանզելու կարելիութեան հետ: Աշխարհական իշխանութիւնը մեզնից ապասում է որ յարգենք գոյութիւն ունեցող դաշնադրութիւնները, որպէս և մենք համոզւած ենք որ պապը ամենածանր հանգամանքնեւում կը մտարերի սուրբ Անսելմի այսքան յաճախ կրկնւած խօսքը թէ՝ «Ոչինչ չը կայ Աստծուն ազնքան հաճելի երկրիս վերաց, որքան եկեղեցու ազատութիւնը»:

ՎIII. Մի խօսքով՝ յարգանք դէպի երկրի օրէնքները բայց այն դէպքում, երբ նոքա խղճի պահանջների դէմ են. յարգանք դէպի իշխանութեան ներկայացուցիչները. պարզ և շիտակ ընդունումն քաղաքական հիմնարկութիւնների. բայց միեւնոյն ժամանակ զօրեղ ընդդիմադրութիւն աշխարհական իշխանութեան ուսոնձութիւններին հոգևոր ասպարիզի վերաց, ներգործական և զոհաբերական անձնւիրութիւն դէպի հիմնարկութիւնները, որոնց նպատակն է մանաւանդաստանդութիւնով՝ քրիստոնէական հասարակութեան, առաքելականութեան և բարեգործութեան համար անկախութեան սպայմանները սրեղծել. վերջապէս հաւատարութն ընտրողական պարտականութեան, որով բոլոր բարեմիտները կարողանան ապահովել մի ազգացին ներկայացուցչութիւն, որը երկրի ցանկութիւններին իսկապէս համապատասխանէ և կարող լինի օրէնսդրութեան մէջ քաղաքական խաղաղութիւնը ապահովող բեմորմներ մոցնել:

Դոկումենտը վերջանում է ցաւակութիւնով որ հոգևոր առաջնորդները հանգամանքների ծանրութիւններից առիսպւած են առաջընթել եկեղեցու գանգատները նոցա դէմ, որոնք կրօնին հակառակ դիտաւորութիւններ են մոտցնում իրանց քաղաքականութեան մէջ: Թղթին ստորագրող հինգ ֆրանսիական կարդինալները անկասկած զգում են որ նոքա Լէօ ԱԼԻ-ի մտքով չեն վարւում, երբ իրանք իրանց հպատակութիւնից առաջ (Ֆրանսիայի հանրապետական կառավարութեան) միաժամանակ գանգառներ ենք անում կառավարութեան վերայ Բայց նոքա միսիթարւում են պարտք կատարած լինելու գիտակցութիւնով:

Ստորագրել են կարդինալներ՝ Դեպրէ (Տուլուզի արքեպիսկոպուս), Լանժենիօ (արքեպ. Ռենսի), Պլաս (արքեպ. Ռեննիի), Ռիշար (արքեպ. Պարիզի), և Ֆուլոն (արքեպ. Լիոնի):

Ահա այն դոկումենտը, որ հրատարակել են հինգ ֆրանսիական կարդինալները և որին յետոյ յարեց նաև կարդինալ Լաւիժըրի: Այդ գրութիւնը, որպէս հասկանալի է, ահազին աղմուկ հանեց. նա բնորոշ է կաթոլիկ կուսակցութեան համար առհասարակի: Եւ շատ տարբեր կերպով մեկնեց նորա իմաստը: Յամենայն դէպս այժմ կատարւած իրողութիւն է որ կաթոլիկութիւնը հաշտուում է հանրապետական կառավարութեան ձեր հետ: Գաղափարների այդ փոփոխութեան գլխաւոր հեղինակը հէնց ինքը պապ Վեռն ԱԼԻ-Ն է: «Մուրճ-ի ընթերցողներին մենք իւր ժամանակ (1890 Ն 12) հարկ համարեցինք խօսել ֆրանսիական կարդինալ Լաւիժըրիի մի ճաւի մասին, որը զարմացրեց ամենքին իւր խօսականութիւնով յօդուտ հանրապետութեան: Այժմ, որպէս տեսնում ենք, պապի այդ քաղաքականութիւնը վերջնականապէս ընդունուում է ֆրանսիական հոգեւորականներից, թէ և, որպէս կարելի է եղրակացնել, իրանց աւանդութեան և սրտի հակառակի:

Հանրապետականները, մի կողմից ուրախացած իրանց այն յաղթութեան համար, որ իրանց ոցիք ստիպել է կաթոլիկ յաման կուսակցութիւնը խոնարհել հանրապետութեան առաջ, այնուամենայնիւ թշնամանքով վերաբերեցին դէպսի հինգ կարդինալների այդ յայտարարութիւնը: Վտանգը այն է, որ կաթոլիկ կուսակցութիւնը իրան հանրապետական անւանելով, այժմ կարող է միանալ

ցայժմեայ հանրապետական պահպանողականների հետ և պարլամենտում այդպիսով կազմել մի մեծամասնութիւն յօդուտ կաթոլիկների քաղաքականութեան։ Անկեղծ հանրապետականները ուրեմն ջանք են անում որ այդ վտանգը չիրականանայ և այդ պատճառով այժմ ամեն մի մինիստրութիւնից պահանջում են որ կասկածաւոր տարրերը չը մտնեն նորա մէջ։

Վերջին ամիսների կարևոր անցքերի շարքին պատկանում է մի կողմից Գերմանիայի, Աւստրիա-Ռուսարիայի և Խոալիայի միջև կապած առևտրական դաշնակցութիւնը (12 տարով, սկսած ներկայ փետրուար ամսից), միւս կողմից Վրանսիական մաքսալին բեֆորմը։ Թէ որ աստիճանի մեծ քաղաքական նշանակութիւն է տրւում Միջին-Եւրոպայի պետութիւնների մէջ դլուխ բերած առևտրական կամ մաքսալին դաշնակցութեանը, այդ երեսում է նրանից, որ զերմանական կայսր Վիլհելմ II իւր կանցլեր վոն Կապրիւիին կոմիտ ախտղոս շնորհեց հէնց այն ըստէին, երբ հեռազիր սուացադաշնը ստորագրելու մոսին, Ուրեմն այն քաղաքական բարեկամութիւնը որ սարիներից ի վեր կապում է Միջին-Եւրոպայի երեք առաջնակարգ տէրութիւններին, հետևցըեց երեք պետութիւնների առևտրական բարեկամութիւնը, որ ահազին նշանակութիւն ունի ազգերի կեանքում։

Կատարեալ փոփոխութեան ենթարկեց նաև Ֆրանսիայի մաքսալին սիստեմը։ Ակսած երեսուն տարիներից ի վեր, նապոլէօն I Ռիժանանակից, 60-ական թւականների սկզբից եւրոպական միջազգային առևտուրի համար պետութիւնները իրար հետ առևտրական դաշնաքներ են կապում, որոնցով ամեն մի երկիր աշխատում է իւր ապրանքները միւս երկիրը անցկացնելու համար՝ կարելիին չափ քիչ մաքս նշանակել կամ, եթէ կարելի է բոլորովին առանց մաքսի ներմուծելու իրաւունք ստանալ։ Այսպիսով առևտրական դաշնաքներով իրար հետ կապւածները օգտուում են մաքսի կողմից արտօնութիւններով, որ չեն վայելում այն երկիրները, որոնց հետ առևտրական դաշնաքներ չը կան կապւած։ Դրանով առաջւանից շատ աւելի նպաստեց միջազգային առուտուրը։

Այդ, միջազգային առևտրին կարելիին չափ ազատ ընթացք տալու քաղաքականութեանը առաջին մեծ հարւածը աւեց 70-ական թւականների վերջում իշխան Բիսմարկը, որը սկսեց հետևել պրոտեկցիոնիստ, այսինքն հովանաւորող քաղաքականութեան, բարձրացնելով մաքսերը օտար ապրանքների վերայ, որ ներմուծւում էին Գերմանիա: Գերմանիայի օրինակից խրախուսւեց մանաւանդ Ռուսաստանը, և ամենքին յայտնի է թէ որքան ռուսական մաքսերը բարձրացել են այս վերջին տասնեակ տարիներում: Եւրոպական մեծ տէրութիւնների քաղաքական լարւած յարաբերութիւնները շատ նպաստեցին որ առևտրական բարեկամութիւնները շատ երկիրների միջև դադարեն, տեղի տալով իրար վանտող քաղաքականութեան:— Դորա հակառակ այժմ՝ երբ միջեւրոպական երեք պետութիւնների մէջ քաղաքական սերու բարեկամութիւն կայ, նոցա մէջ էլ բնական է որ պէտք է հաստատւէր նաև առևտրական բարեկամութիւն:

Ֆրանսիացում՝ քաղաքականապէս լարւած լինելով եւրոպական տէրութիւնների մեծամասնութեան հետ, այս վերջին տարիներս սկսեց զօրեղանալ հովանաւորող կուսակցութիւնը, որի ճանաչւած առաջնորդն էնախիին մինիստր և այժմ պարլամենտի անդամ Մելինը: Այդ կուսակցութեան անւանում են նաև ազբարականների կուսակցութիւն, որովհետեւ նորա կարծիքով՝ մինչ այժմ տիրապետող տնտեսական քաղաքականութիւնը որքան նպաստաւոր էր ֆարբիկային (գործարանական) արդիւնաբերութեան, նոյնքան նա վնասակար էր երկրագործութեան և առհասարակ հում նիւթերի արդիւնաբերութեանը. և այդ պատճառով, նոցա ասելով՝ այժմ պէտք է աշխատել հաւասարակշռութիւն սուեղծել հում նիւթերի արդիւնաբերութեան և գործարանական արդիւնաբերութեան մէջ, որ կարելի է միայն մեծ մաքսեր նշանակելով օտար երկիրների հում բերքերի վերայ:

Այս կուսակցութիւնը անսպասելի մեծ ոյժ առացաւ Ֆրանսիայում, և պարլամենտում նորա դէմ ոչինչ չը կարողացաւ զիմանալ. այնպէս որ ամեն մի մինիստրութիւն կարող էր յոյս ունենալ քիչ թէ շատ ապրելու. եթէ միայն մաքսային լինդիրներում հետևող լինէր Մելինի կուսակցութեան:

Սուեղծւեց մաքսերի մի նոր սիստեմ երեք աստիճաններով. այն

երկիրների համար, որոնք կը համաձայնեն ֆրանսիական ապրանքների համար փոքր մաքս նշանակել՝ ֆրանսիան կը դործադրի առաջին աստիճանի, այսինքն ամենափոքր մաքսերը, աւելի խստապահանջների համար՝ միջակ մաքսեր, իսկ ամենախստապահանջների համար՝ ամենաբարձր մաքսեր։ Բայց նոյն իսկ նշանակւած ամենափոքր մաքսերը առաջւայ համեմատութեամբ շատ բարձր էն, իսկ ամենաբարձր մաքսերը ազնքան բարձր էն, որ արգելք դնելու հաւասար նշանակութիւն ունին։

Ֆրանսիայի մաքսային այդ սիստեմը սկսեց կործադրւել ներկայ փետրւար ամսի 1-ից, եւր տեսակում դա մի նորաձեռութիւն է դեռ ևս անյայտ ապագայով։ Բայց, բացի նսպանիայից, որի հետ առանձին համաձայնութիւն կարելի չեղաւ կայացնել, պետութիւնների մեծագոյն մասը արդէն համաձայնութիւն է տւել ընդհանուր տարիվի փոքրագոյն մաքսերի փոխարէնը առանձին արտօնութիւններ տալ ֆրանսիական աղբանքների համար։

Գաղաքակրթութեան աշխարհի համար մի վերին աստիճանի հետաքրքրական կարևոր մի խնդիր ներկայ րոպէումն կլանել է ամբողջ Դերմանիայի ուշադրութիւնը։ Դա պրուսական դպրոցական բեմորմի խնդիրն է, որի առիթով պրուսական կառավարութիւնը առաջարկել է պրուսական պարլամենտին մի օրինագիծ մօտ երկու հարիւր յօդածներով։ Այդ օրինագիծը, որը ուղում է Պրուսիայի դպրոցական գործը կրօնական դաւանանքների հողի վերաց դնել՝ դրականապէս ամբողջ Դերմանիան բաժանել է երկու կուսակցութիւնների, որոնցից ազատամիտ կուսակցութիւնը վերջին ծայր ջանքեր է անում խանգարել այդ օրինագիծի իրականալուն, նորանով խախտած տեսմելով ներկայիս քաղաքակրթութեան ակդրունքները։ Բայց դա արդէն մի նիւթ է, որին հարկաւոր ենք համարում այլ անգամ վերադառնալ։